




Lessings Ringparabel

Nathan der Weise.

Ein
Dramatisches Gedicht,
in fünf Aufzügen.

Introite, nam et heic Dii sunt!

APVD GELLIVM.

Von
Gotthold Ephraim Lessing.

1779.

[...]

ՆԱԹԱՆ— Ինչ-որ ժամանակ հին արևելքում
Մի մարդ է ապրել: Նա իր տիրելի
Անձից՝ թանկագին մի մատանի է
Նվելք ատանում: Մատանու ակը,

Որը օպալ էր և շողշողում էր
Բազում գույներով, ունենում է մի
Գաղտնի զորութուն. ով այդ մատանին
Կրում էր մատին, նա հաճելի էր
Երևում աստծո և մարդկանց աչքին:
Իհարկե, լքնավ զարմանալի չէ:
Որ իմաստունն այդ, իր ամբողջ կյանքում
Ոչ մի ակնթարթ չբաժանվելով
Հրաշք մատանուց, իր մահից անաչ
Պատվիրում է, որ իր հետնորդները
Հավերժ պահեն այն: Այդ պատճառով էլ
Նա այդ մատանին ժառանգություն է
Թողնում ամենից տիրելի որդուն՝
Խիստ պատվիրելով, որ նա էլ հանձնի
Իր սիրած որդուն: Եվ ստացվում է,
Որ հորից սիրված որդին է միայն,
Անկախ հասակից, հրաշք մատանու
Գաղտնի զորությամբ, դառնում առաջնորդն
Ու տնօրենը հայրենական տան:
Հասկացա՞ր, սուլթան:

ՍՈՒԼԹԱՆ—

Հասկացա: Առաջ:

ՆԱԹԱՆ— Այսպես, սերնդից սերունդ անցնելով,

Մատանին գալիս, հասնում է մեկին,

Որ երեք որդու հայր էր բախտավոր:

Եվ որովհետև երեքն էլ նրան

Հնազանդ էին հավասարապես,

Հավասարապես ինքն էլ սիրում էր

Իր որդիներին: Միայն երբեմն,

Նայած այդ պահին ով էր ցրոսմ հոր
 Մենակությունը՝ մեծը, միջնեկը,
 Թե՛ կրտսեր որդին, մյուս երկուսի
 Բացակայությամբ նվաճում էր հոր
 Բարեգույթ սիրտը, հայրը նրան էլ
 Ակամայորեն խոստանում էր տալ
 Հրաշք մատանին: Այդպես անցնում է
 Մի առ ժամանակ, մինչև որ մահը
 Ծեծում է թուղը: Բարի հայրը խիստ
 Հուսահատվում է: Նա վշտանում է,
 Որ որդիներից մեկին կարող է
 Կտակել միայն հրաշք մատանին,
 Մինչդեռ առանձին յուրաքանչյուրին
 Խոստացել էր այն: Ի՞նչ անել այժմ:
 Եվ ահա մի օր քաղտնի իր մոտ է
 Կանչում ոսկերչին, պատվիրում նրան
 Երկու մատանի, որոնք հար նման
 Լինեն իր ձեռքի հրաշք մատանուն՝
 Խոստանալով տալ պահանջված գինը:
 Եվ ոսկերիչը կատարում է այդ:
 Նա կատարում է այնքան հմտորեն,
 Որ երբ բերում է դրանք հանձնելու
 Պատվիրատուին, վերջինս խնքն է
 Դրանք շփոթում իսկականի հետ:
 Այդպես գոհ, ուրախ հայրը վանչում է
 Իր զավակներից յուրաքանչյուրին
 Առանձին իր մոտ, յուրաքանչյուրին
 Առանձին օրհնում, հանձնում մատանին
 Եվ ինքը մեռնում: Կտո՞ւմ ես, առաքման:
 ՍԱԼԱԴԻՆ— (հուզված դեմքը շուտ տալով):
 Կտո՞ւմ եմ, լսում: Աշխատիր միայն
 Շուտ վերջացնել:

ՆԱԹԱՆ—

Արդեն վերջացրի:

Իսկ մնացածը լինքն իրեն արդեն
Հասկանալի է: Հազիվ է հայրը
Թողնում աշխարհը, երբ որդիներից
Յուրաքանչյուրը ներկայանում է
Իր մատանիով և պահանջ դնում՝
Դառնալ տնօրենն ու առաջնորդը
Հայրենական տան: Սկսում են քննել
Վիճել, լռողութել, բայց լիզուր. ոչ ոք
Զի ապացուցում, թե ներկայացված
Ո՞ր մատանին է ժառանգականը:
(Լուում է, սպասելով սուլթանի պատասխանին):
Ինչպես, որ մենք ենք արդ ղեկավարանում
Յուլյց տալ լռությունից ճշմարիտ վրոնը:

ՍԱԼԱԴԻՆ— Եվ դա իմ հարցի պատասխանն էր, հա՞...

ՆԱԹԱՆ— Ես պիտի միայն ներսումն լսողդեմ,
Որ ինքս նույնպես չեմ համարձակվում
Տալքերելու այդ մատանիները,
Որոնց՝ հայրը ճիշտ այդ նպատակով
Պատվեր էր տվել:

ՍԱԼԱԴԻՆ—

Մատանիները:

Ինձ հետ մի խաղա: Իսկ ես կալո՞ւմ եմ,
Այն կրոնները, որոնք թվեցի
Խիստ տարբերվում են, տարբերվում մարդկանց
Կրած հազուատով, կերած-խմածով:

ՆԱԹԱՆ— Սակայն ոչ երբեք իրենց հիմքերով:

Նրանք բոլորն էլ նույն հիմքն ունեն.
Պատմութունն է դա, որ մեզ է հասել
Գրավոր խոսքով կամ ավանդությամբ:
Իրավունք ունե՞նք մենք պատմությանը
Զգավատալու: Մի՞թե այդպես չէ:
Մենք ամենից շուտ ո՞ւմ ենք հավատում:
Այդո՞րք օտարին, թե՞ շուրախինին,
Ո՞ւմ արյունն ենք մենք, իհարկե, նրա

Ու՛մ մանկութանից անխաղախ օխրով
Փայփայել է մեզ, ու՛մ մեզ չի խաբել,
Եթե ա՛վելի փրկարար չէր մեզ
Խաբված լինելը: Կարո՞ղ եմ արդյոք
Ես չհավատալ իմ նախնիներին,
Երբ անվերապահ դու հավատում ես
Քո նախնիներին: Կամ հակառակը:
Կարո՞ղ եմ արդյոք պահանջել քեզնից՝
Համաձայնվել իմ նախնիների հետ՝
Մոլորության մեջ դատապարտելով
Քո նախնիներին: Նույնը կարող է
Վերաբերել և քրիստոնյային:
Համաձայն չե՞ս դու:

ՍԱԼԱԴԻՆ — (առանձին): Աստված է վկա,

Նա ճշմարիտ է: Ես լսեաք լ՛ընեմ:

ՆԱԹԱՆ — Բայց նորից դառնանք մատանու մասին

Մեր պատմությանը: Ինչպե՞ս ասացի,

Երեք որդին էլ խիստ քողոքում են,

ՆԱԹԱՆ —

Դատավորն ասաց.

Դուք անմիջապես կամ ինձ մոտ պիտի

Բերեք ձեր հորը, կամ էլ այստեղից

Իսկույն հեռանաք: Ի՞նչ է, կախժում եք,

Ես հանելուկներ ամեկնող եմ այստեղ:

Կամ ապաստում եք մինչև իսկական

Մատանին Վոսի՞: Բայց սպասեցեք:

Այնպես լսեցի, որ այդ մատանին

Իբրև օժտված լե գաղտնի զորոնթյամբ,

Ե՛վ դատավորին յուրաքանչյուրը

Երդմամբ հաստատում, որ իր մատանին

Նա ստացել լե անձամբ հոր ձեռքից:

Ե՛վ որ իր մահից ղեռնա շատ առաջ

Հայրը նրան էր խոստացել այն տալ,

Ու կատարել է նա իր խոստումը:

Ամեն մի եղբայր երդվում լե նմե,

Որ հայրը իրեն երբեք չէր խաբի,
Եվ ինքը երբեք չի համարձակվի
Հորն ամբաստանել խաբեության մեջ,
Որ ավելի շուտ իր եղբայրներն են
Կեղծիք կատարել, թեպետ և նրանց
Ազնվությանը նա չի կասկածել,
Եվ որ անպատճառ նա դավաճանին
Կհայտնաբերի և վրեժխնդիր
Կլինի նրանից:

ՍԱԼԱԴԻՆ— Իսկ դատավորը,
Կոռեմ իմանալ, թե դու փնչպես ես
հոսեցնում նրան:

Լինել իմաստուն այդ դատավորը...

ՍԱԼԱԴԻՆ— (ուժգնորեն բռնում է նրա ձեռքը և պահում
մինչև վերջ):

Ե՛ս, ես փոշի եմ: Ոչինչ եմ, աստվա՛ծ:

ՆԱԹԱՆ— Քեզ ի՞նչ պատահեց:

ՍԱԼԱԴԻՆ— Օ՛, նաթան, նաթան:

Քո դատավորի կանխադաշնակած

Այդ ժամանակը դեռ շատ հեռու է:

Եվ ոչ էլ ես եմ այդ իմաստունը:

Լավ: Գնա, նաթա՛ն: Բայց քեզ համարիր

Իմ բարեկամը:



Herausgegeben von der Lessing-Akademie
nach einer Idee von Frau E. Niemann (Wolfenbüttel),
unterstützt durch eine großzügige private Spende.



Lessing-Akademie
Schlossplatz 2 · 38304 Wolfenbüttel
Tel.: (05331) 808-227 · Fax: (05331) 808-248
E-mail: l-a@lessing-akademie.de · www.lessing-akademie.de

Armenisch



Neuer Weg 48a | 38302 Wolfenbüttel
www.foconet.de